Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-877[8]-22.10.2015,03.11.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԿԻՐԱՌՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-220-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը «որոշմամբ» բառից հետո լրացնել «և պետական բյուջե է վճարվում որոշումը ընդունելուց հետո՝ 10-օրյա ժամկետում» բառերով.

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը կիրառվում է Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան գործունեության կասեցման մասին որոշում ընդունած լիազորված մարմնի ղեկավարի որոշմամբ նշանակված տուգանքների նկատմամբ, եթե այդ որոշումը ընդունվել է 2018 թվականի հունվարի 1-ից հետո, իսկ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը նշանակված և նշանակման օրվանից եռամսյա ժամկետում չվճարված (կամ մասնակի չվճարված) տուգանքների գումարները կրկնապատկվում են մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող Օրենքին համապատասխան:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Կատարված փոփոխությունները**
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: